

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ Առաքելական Սուրբ Եկեղեցին դարերի հոլովույթում միշտ առաջնորդել եւ ամեն ջանք գործադրել է՝ պահպանելու Տիրոջից իրեն վստահված բանավոր հոտը՝ հայ ժողովրդին։ Այն անգնահատելի դերակատարություն է ունեցել ոչ միայն իր ժողովրդի հոգեւոր կյանքի կազմակերպման գործում, նաեւ բացառիկ գործունեություն է ծավալել մշակութային զարգացման ասպարեզում՝ նպաստելով ազգային ինքնագիտակցության ամրապնդմանը եւ քրիստոնեական բարոյական բարձր արժեքների հաստատմանը։

Ինչպես դարերի ընթացքում, այսօր եւս Հայ Եկեղեցու այս ազգանվեր գործունեությունը համակարգել ու առաջնորդել են Հայոց հայրապետները, որոնք ընտրված լինելով Ամենակալի կամոք եւ համայն հայ ժողովրդի համաձայնությամբ, իրենց ողջ եռանդն ի սպաս են դրել իրենց վստահված ժողովրդի բարօրության եւ առաջընթացի գործին։ Ահա Ամենայն Հայոց հայրապետների ունեցած այս բացառիկ հոգեփրկչական եւ ազգապահպան դերակատարությունը գիտակցելով՝ տարբեր ժամանակներում Հայաստանը նվաճած բռնակալները եւ ներքին թշնամին փորձել են Հայոց Եկեղեցու եւ նրա հայրապետների իրավունքները սահմանափակել եւ թույլ չտալ, որ վերջիններս իրագործեն իրենց վստահված գործառույթները։ Այս նպատակին հասնելու համար նրանք դիմել են զանազան միջոցների՝ վարկաբեկել, աքսորել, բանտարկել, անգամ սպանել են Ամենայն Հայոց հայրապետներին՝ դրանով փորձելով բանավոր հոտը զրկել իր հովվից եւ ցրել այն։

Այսօր հայ ժողովուրդն իրականացրել է դարերով փայփայած երազանքը՝ հայրենի երկրի մի փոքրիկ հատվածում վերականգնել է իր

անկախությունը, սակայն Հայ Առաքելական Ս. Եկեղեցուն նետված վերոհիշյալ, սակայն փոխակերպված մարտահրավերները դեռեւս արդիական են ու կենդանի։ Այժմ եւս փորձում են խարխլել հայ ժողովրդի հոգեւոր ու ազգային ինքնության հիմը հանդիսացող Հայոց Ս. Եկեղեցին, սասանել հավատացյալների հավատը եւ վստահությունը դեպի հայ եկեղեցականը։

Այս պայմաններում Հայ Եկեղեցու բոլոր զավակների պարտքն է միավորվել եւ պաշտպանել, սատար ու զորավիգ լինել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն ու նրա եկեղեցականներին, որպեսզի Հայ Եկեղեցին ու հայ եկեղեցականը մեզ բոլորիս Քրիստոսի սիրո եւ լույսի ճանապարհով առաջնորդեն դեպի փրկություն։

* * *

Այս տարի լրացավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման եւ գահակալության 19-րդ տարեդարձը։ Այսու, ի սրտե շնորհավորում ենք Վեհափառ Հայրապետին եւ մաղթում, որ Բարին Աստված ամենառատ Իր շնորհներով օրհնի ազգընտիր Հայրապետին եւ արդյունաշատ կյանքի քաջառողջ ու երջանիկ երկար տարիներ պարգեւի նրան։